ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ — № 11, 1961 — Общественные науки

Ժ. Տ. Ճեմարիսյան

ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԴԱՐՁՎԱԾԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարակատար դերբայը ցույց է տալիս անցյալում կատարված-ավարտված գործողություն, որը թողել է մնայուն հետևանք։ Կատարված գործողության մնայուն հետևանք ցույց տալը հարակատարի դերբայական յուրահատուկ իմաստն է, որից և բխում են նրա գործածության առանձնահատկությունները։

Արդի հայերենում հարակատար դերբայն ունի բազմազան կիրառություններ. նա մասնակցում է բայի եղանակային ձևերի կազմությանը՝ բաղադրելով սահմանական եղանակի հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակները և գործածվում է ինքնուրույնաբար՝ հանդես գալով նախադասության տարբեր անդամների պաշտոններով։ Սակայն եղանակային ձևերի կազմությանը հարակատար դերբայը մասնակցում է որոշակի սահմանափակումներով։ Արդի հայերենում մի շարք բայերի հարակատար ժամանակները գործածական չեն. հարակատար ժամանակներ չեն կազմում բոլոր ներգործական բայերը, այլև այն չեզոք բայերը, որոնց ցույց տված գործողությունը չի հատկանշվում հետևանքային մոմենտով (վազել, աճել, քայլել, փչել և այլն)։ Գործածական չէ գրած եմ, գրած էի կամ վազած եմ, վազած էի, այլ միայն՝ գրված եմ, գրված էի, կամ՝ նստած եմ, նստած էի։ Իսկ գոյականաբար կամ ածականաբար գործածվելիս հարակատար դերբայը կիրառական այսպիսի սահմանափակում չունի. այս դեպքում նա կարող է հանդես գալ բայի երեք սեռով էլ, ինչպես՝ աշխարհ տեսած մարդ, գրված գիրք, ընկած երեխա կամ՝ տեսածը, գրվածը, ընկածը և այլն։ Բայց հարակատար դերբայի անվանական գործածությունը նույնպես զերծ չէ բայի սեռի հետ կապված առանձնահատկություններից (միայն թե այստեղ այդ առանձնահատկություններն այլ կարգի են), որոնց կանդրադառնանք քիչ հետո։

1. Հարակատարով կազմված դարձվածն իբրև որոշիչ

Հարակատար դերբայը նախադասության մեջ կարող է կատարել տարբեր պաշտոններ, բայց ամենից հաճախ նա հանդես է գալիս որպես որոշիչ։ «Վազում էր հապճեպ՝ անգիտության մեջ դարեր փառացած գյուղերի մոտով» (ԱԻԵ, էջ 113)։ «Ու անեծք տալով իջնում է նա ցած՝ դատարկ ետ բերած հին կուժը ուսին» (ՀԹԸԵ, էջ 189)։ «Եվ իմ ձեռքով նորից կյանքի կոչված Արան ինձ կըսիրե...» (ՆԶԱԳ, էջ 138)։ «Անակնկալ պատահարից շփոթված Պետրոսը վեր կացավ տեղից...» (ՄԱ, էջ 172)։ «Ինչպես որդին կորցրած ծնողը գտնի զավակին...» (ՍԶԸԵ, էջ 280)։ Երբեմն որպես որոշիչ կարող է ըմբռնվել նաև սեռական հոլովով հարակատար դերբայը, որն արտաքուստ նման է հատկացուցչի, ինչպես՝ «Գութդ կորհնեն կոտորածի այս ձորում...» (ՀԹԸԵ, էջ 35)։ «Ու մինչ

վստահ գյուտ արածի ուրախությամբ նա սպասեց, որ Աստղիկը իրեն նայի...» (ԴԴվ, էջ 528)։

Որոշչի պաշտոնով այդպես հաճախակի հանդես գալը կապված է հարակատար դերբայի՝ գործողության հարատևող արդյունք ցույց տալու հատկանշի հետ։ Որոշչի պաշտոնով հանդես գալիս հարակատար դերբայը իրենով դրսևորվող գործողության այդ հարատևող արդյունքը, հետևանքը վերագրում է այս կամ այն առարկային՝ որպես նրա հատկանիշ (քարացած գյուղեր, ետ բերած կուժ և այլն)։

Վերը մենք նշեցինք, որ հարակատար դերբայի անվանական գործածությունն ունի բայի սեռի հետ կապված որոշակի առանձնահատկություններ։ Ի՞նչ առանձնահատկություններ են դրանք։ Ներգործական բայերից կազմված հարակատար դերբայը հաճախ հանդես է գալիս կրավորական իմաստով, իսկ կրավորական բայերից կազմված հարակատար դերբայը՝ չեզոր իմաստով։ Բանն այն է, որ հարակատար դերբայը որպես որոշիչ հանդես է գալիս կամ իր գործողության կատարողի, կամ իր գործողության օբյեկտի համար, այլ խոսքով՝ հարակատար դերբայ որոշչի որոշյալը լինում է կամ դերբայով դրսևորվող գործողության կատարողը կամ այդ գործողության օբյեկտը։ Որոշիչ հարակատար դերբայի սեռն էլ հենց հիմնականում պայմանավորված է նրանով, թե ում համար է նա հանդես գալիս որպես որոշիչ՝ իր գործողության կատարողի, թե օբյեկտի։ Այսպես, ներգործական բայերից կազմված որոշիչ հարակատար դերբայը ներգործական սեռի իմաստով է ըմբռնվում միայն այնպիսի դեպքերում, երբ դերբայի որոշյալը դերբայի գործողության կատարողն է, ինչպես՝ «Եվ ինչ, դեռ երեկ նրանցից մեկին տեսա դատարանում մի բանկ կողոպտած պարոնի պաշտպանելիս» (Շեկ, հ. 9, էջ 456)։ «Ճիշտ է, վախով էին լցված նրա որսորդ տեսած եղնիկի աչքերը» (ԴԴԸՊ, էջ 10)։ «Իսկ Գյուլնազ աքիրը լռել էր, ինչպես սկեսուրից թաքուն մի բան արած հարս» (ՂԱե, հ. 2, էջ 248)։ «...Մթին ամպերը, ղեկը կորցրած նավերի նման տարածվում էին, չիմանալով ուր գնալ» (Շեկ, հ. 3, էջ 13)։ «...Մի խոսքով մոր նման, թվանքի ձեռը իր էրեխի վրա լսած մոր նման» (ՀԹԸԵ, էջ 373)։

Ներգործական սեռի հարակատար դերբայով կազմված դարձվածը բնականաբար կողմնակի ենթակա ունենալ չի կարող, քանի որ դերբայի գործողության կատարողը դարձվածի որոշյալն է (որսորդ տեսած եղնիկի աչքեր— տեսնողը աչքերն են և այլն). դրա փոխարեն նա մեծ մասամբ ունենում է իր կողմնակի ուղիղ խնդիրը (բանկ, որսորդ, բան, ղեկը, ձեռը)։

Իսկ երբ ներգործական բայերից կազմված հարակատար դերբայը որպես որոշիչ հանդես է գալիս իր գործողության օբյեկտի համար, ապա նա ունենում է ոչ թե ներգործական, այլ կրավորական սեռի իմաստ, քանի որ ցույց է տալիս իր որոշյալի ոչ թե կատարած, այլ կրած գործողության արդյունքի հարատևումը։ «Հաջորդ օրը Գարեգինը դիտեց դեռ պատերազմից առաջ կառուցած սիլոսի աշտարակն ու հորերը» (ՍԽՀ, էջ 207)։ «Անփույթ նետած ժապավենի նման ծալմլվում էր խճուղին» (ԱՍՔ, էջ 441)։ «Ես այնքան անարի չեմ, որ իմ գործած հանցանաց չափով պատիժ կրել չկարողանամ» (ՄԳՄ, էջ 293)։ «Ինչ որ կարող է խոստանալ շահը, երկրակալ շահը իր սիրած կնկան» (ՀԹԸԵ, էջ 262)։

Այս կապակցությամբ պրոֆ. Սևակը գրում է. «Շատ հաճախ հարակատար դերբայն իբրև որոշիչ դրվում է նաև այնպիսի գոյականների վրա, որոնց կա-

տարած գործողության արդյունքը չի ցույց տալիս, այլ որոնք կատարված այդ գործողության արդյունքն են կամ նույնիսկ խնդիրը։ Օրինակ՝ երբ ասում ենք նամակ գրած մարդը եկավ, այստեղ գրած դերբայը ցույց է տալիս մարդ առարկայի հատկանիշը, իբրև յուր իսկ կատարած գործողության (նամակ գրելու) հետևանքն իր մեջ պահող, ունեցող առարկայի (մարդը նամակ է գրել, մարդը նամակ գրողն է, մարդը գրած է նամակ), բայց երբ ասում ենք մարդու կրած նամակը, այստեղ գրած դերբայը դրված է ոչ թե իր երբեմնի ենթակայի (մարդու), այլ իր երբեմնի խնդրի՝ նամակի վրա և, իհարկե, ցույց է տալիս ոչ թե նամակի կատարած գործողության արդյունքի հարատևումը, այլ նամակի կրած գործողության արդյունքի հարատևումը, այսինքն՝ կրավորական սեռի իմաստ ունի և ոչ թե ներգործական»[1]։

Այսպիսի դեպքերում արդեն դերբայական դարձվածի կազմում կարող է հանդես գալ նաև դարձվածի կողմնակի ենթական՝ դերբայի գործողության կատարողը (իմ գործած, իր սիրած, մարդու գրած)։

Այսպիսով, հանցանք գործած երեխա, ներկայացում տեսած մարդ և այլ այսպիսի բառակապակցություններում գործած, տեսած դերբայներն արտահայտում են ներգործական սեռի իմաստ, իսկ տեսած ներկայացում, գործած հանցանք և այլ այս տիպի բառակապակցություններում այդ նույն դերբայներն առանց «վ» բայածանցի արտահայտում են կրավորական սեռի իմաստ։ Այս վերջին դեպքում հնարավոր են նաև «վ»-ով ձևերը։

Հետաքրքիր է, որ ներգործական բայերից կազմված («վ» չունեցող), բայց կրավորական սեռի իմաստով հանդես եկող հարակատար դերբայի մոտ գործողության բացակա կատարողի գաղափարն ավելի զգալի է, քան կրավորական բայերից կազմվածների («վ» ունեցողների) մոտ։ Ներկած կտոր, ջարդած աթոռ, տարածած լուր, սկսած գործ, բանդած տուն և այլ այս տիպի կապակցություններում ներկած, տարածած, սկսած, բանդած, ջարդած դերբայների համար անպայման ենթադրվում է գործողության որևէ կատարող (որևէ մեկի կողմից ներկած, տարածած, սկսած և այլն)։ Իսկ եթե ասենք՝ ներկված կտոր, տարածված լուր, սկսված գործ, բանդված տուն, ջարդված աթոռ, ապա ներկված, տարածված, սկսված, բանդված, ջարդված դերբայների համար գործողության որևէ կատարող կարող է ենթադրվել, բայց ոչ անպայմանորեն. գործողության կատարողի գաղափարն այստեղ շատ ավելի թույլ է զգացվում։ Հետևաբար, երբ ներգործական և կրավորական բայերից կազմված հարակատար դերբայները հանդես են գալիս որպես որոշիչ իրենց գործողության օբյեկտի համար և երբ նրանց գործողության կատարողը դրսևորված չէ, առաջիններ. ի մոտ՝ առանց «վ»-ի ձևերում կրավորական սեռի իմաստն ավելի ուժեղ է, քան երկրորդների մոտ, «վ» ունեցող ձևերում։

Պետք է նշել նաև, որ կրավորական «վ» ածանց ունենալու դեպքում որոշ բայերի մոտ հարակատար դերբայի գործողության կատարողի գաղափարը ունենում է ընդհանրական, ոչ կոնկրետ բնույթ։ Այսպես, օրինակ, երբ ասում ենք սիրված հերոս, մոռացված գիրք, հարգված մարդ, արհամարհված սովորություն և այլն, ապա ըմբռնում ենք ընդհանրապես, բոլորի կողմից հարգված, մոռացված և այլն։ Բայց երբ ասում ենք սիրած հերոս, մոռացած գիրք և այլն,

1 Պրոֆ. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1955, էջ 299։

հասկանում ենք որևէ մեկի սիրած, մոռացած, թեև պարզ չէ, թե հատկապես ում։

Այդ պատճառով էլ ներգործական բայերից կազմված հարակատար դերբայը միայն այն դեպքերում կարող է կրավորակերպ «վ» ածանց ընդունել (առանց նախադասության մտքին վնասելու), երբ նրա բացակա գործողության կատարողը անուշադրության է մատնված։ «Մարկոսը նստել է իրենց տանիքի վրա դարսած ցախի վրա...» (ՂԱԵ, հ. 2-րդ, էջ 252)։ «Նա ձեռքին ուներ հասարակ փայտից շինած մի երկար քանոն...» (ՄԱ, էջ 156)։ Կարելի է ասել՝ տանիքի վրա դարսված ցախի վրա, կամ՝ հասարակ փայտից շինված քանոն։

Իսկ եթե կողմնակի ենթական կոնկրետ կերպով զգալի է կամ նախադասության մտքից պարզ է նրա ով կամ ինչ լինելը, ապա բոլորովին հնարավոր չէ դերբայը կրավորաձև դարձնել։ «Այդ շռայլ սեղանները, անքուն դիշերները, ըմպելիքների սուր հոտը, բացի բոպեական թմրությունից, պարգևեցի՞ն նրա հոգուն որոնած անդորրությունը» (ՇՔ, էջ 319)։ «Այդ վաղուց շլսած բառն այնպիսի ջերմությամբ լցրեց նրա սիրտը, անսպասելի այնպես քնքշացրեց» (ԱՍՔ, էջ 20)։

Այստեղ որոնած, շլսած դերբայների կողմնակի ենթակաների ով լինելը նախադասության մտքից արդեն պարզ է (իր որոնած անդորրությունը, իր շլսած բառը), ուստի և այդ դերբայները կրավորաձև «վ» ածանց ընդունել չեն կարող. ածանցն ավելացնելու դեպքում դուրս կգա, որ խոսքը ոչ թե նրա որոնած անդորրության մասին է, այլ ընդհանրապես որոնված կամ՝ այդ բառը ոչ թե նա չէր վաղուց լսել, այլ ընդհանրապես վաղուց չէր լսվել։

Եթե ներգործական կամ ավելի ճիշտ ներգործաձև հարակատար դերբայը որոշչի պաշտոն կատարելիս կարող է արտահայտել կամ ներգործական, կամ կրավորական իմաստ, ապա կրավորաձև հարակատար դերբայը կարող է արտահայտել կամ կրավորական, կամ չեզոք իմաստ։

Կրավորական բայերից կազմված հարակատար դերբայ որոշիչը կրավորական սեռի իմաստ է ունենում այն դեպքերում, երբ նրա որոշյալը դերբայի գործողության օբյեկտն է։ «Մարդուց խայթված վիրավոր հոգիս» (ԱԻԵ, էջ 109)։ «Ես մի չարագործ եմ, աստծուց և մարդկանցից անիծված...» (ՄԳՄ, էջ 293)։ «Ամեն տեղ անգութ աշխարհի զոհեր՝ չար մարդկությունից ճնշված, հալածված» (ԱԾԸԲ, էջ 27)։ «Որպես փոթորկից հալածված թռչնակ, որ կուլ է գալիս դալար թփերում» (ԱԾԸԲ, էջ 73)։

Վերևի օրինակներում բոլոր դերբայներն ունեն իրենց ներգործող խնդիրները, բայց դա չի նշանակում, թե առանց ներգործող խնդրի կրավորական հարակատար դերբայը չի կարող կրավորական սեռի իմաստ արտահայտել։ Կրավորական հարակատար դերբայը առանց ներգործող խնդրի էլ կարող է կրավորական սեռի իմաստ ունենալ, եթե նրա որոշյալն ըմբռնվում է որպես նրա գործողության օբյեկտ, ինչպես՝ «Բնական և խորին թախծությամբ արտասանված պարզ բողոքը սթափեցրեց մոլորված կնոջը» (ՇԵԼԺ, հ. 2-րդ, էջ 113)։ «Թարեմին դրված լամպի կոտրված ապակին արդեն բոլորովին սևացել էր...» (ՆԴԵԼԺ, հ. 7-րդ, էջ 36)։ Այստեղ բողոք և լամպ որոշյալներն ըմբռնվում են որպես արտասանված և դրված դերբայների գործողության օբյեկտներ, քանի որ գործողության կատարողների գաղափարը, իմաստը այստեղ զգալի է (ինչ որ մեկի կողմից արտասանված, ինչ որ մեկի կողմից դրված)։ Բայց բանն այն է, որ ներգործող խնդրի բացակայությամբ գործողության կատարողի գաղա-

փարը սովորաբար թուլանում է, որի հետևանքով էլ դերբայի օբյեկտը կարող է ըմբռնվել որպես սուբյեկտ կամ ձեռք բերել սուբյեկտի բնույթ, այսինքն՝ ներգործող խնդրի բացակայությամբ կրավորական հարակատար դերբայը կարող է ըմբռնվել չեզոք իմաստով, այսպես, օրինակ. «Հագին մի հնամաշ շրջազգեստ կար, ծնկներն ու կուրծքը եղեղված...» (ԱՄԾ, էջ 248)։ Ճղնղված դերբայի գործողության կատարողն այստեղ իրեն զգացնել չի տալիս, որի պատճառով էլ դերբայի որոշյալը (շրջազգեստ) ըմբռնվում է որպես դերբայի գործողության կատարող, իսկ դերբայն էլ ըմբռնվում է չեզոք իմաստով։ Բայց պետք է նշել, որ կրավորական բայերից կազմված հարակատար դերբայը մաքուր չեզոք սեռի իմաստ ունենում է միայն այն դեպքերում, երբ ներգործող խնդիրը ոչ միայն չի զգացվում, այլև բացի որոշյալից գործողության այլ կատարող չի ենթադրվում, օրինակ՝ «Լայն երկնքի տակ փռված գյուղեր, անդորր ու հանգիստ» (ԵՉԸԵ, էջ 27)։ «Մայր էր մտնում իրիկնային արևը՝ բեժ լույսով վառված» (ԵՉԸԵ, էջ 18)։ «...և բռնեց դողդոջ մատներով վարդենու նոր բացված կարմիր կանաչ կոկոնը և մրմնջաց յուրովի...» (ԱԻԵ, էջ 281)։ Ընդգծված դերբայական դարձվածների դերբայներն ունեն չեզոք սեռի իմաստ, որովհետև փռվելու, վառվելու, բացվելու գործողությունների համար, բացի նրանց որոշյալներից (գյուղեր, արևը, կոկոնը), գործողության այլ կատարողներ չեն ենթադրվում (գյուղերն իրենք են փռվել, արևն ինքն է վառվել, կոկոնն իրենիրեն է բացվել)։

Չեզոք սեռի հարակատար դերբայը գրեթե միշտ հանդես է գալիս միայն չեզոք իմաստով։

Չեզոք սեռի հարակատար դերբայ որոշչի որոշյալը համարյա միշտ լինում է դերբայով արտահայտված գործողության կատարողը, որի հետևանքով և, այդպիսի դեպքերում, դարձվածը կողմնակի ենթակա չի ունենում։ «Ու այն է ուզում էր մոտը կանգնած հրամանատարներից մեկին հանձնարարել՝ նոր հետախույզներ ուղարկել, երբ քայլերի ձայն առավ ներքևից» (ՍՉՊԹ, էջ 131)։ «Գնա՛նք, կթրջվենք,—լսեց մտքի մեջ ընկած Միքայելը» (ՎԽՄՄՀ, էջ 285)։

Սակայն անհրաժեշտ է նշել, որ չեզոք սեռի հարակատար դերբայը երբեմն կարող է որպես որոշիչ հանդես գալ այնպիսի որոշյալի համար, որը այդ դերբայի գործողության ոչ կատարողն է և ոչ էլ, բնականաբար, անմիջական օբյեկտը (դերբայը չեզոք սեռի է)։ Այսպիսի դեպքերում չեզոք սեռի հարակատար դերբայի գործողության կատարողը կամ հանդես է գալիս դերբայական դարձվածի կազմում որպես կողմնակի ենթակա, կամ էլ պարզապես չի դրսևորվում։

«Բայց մի օր զզջումի կսկիծով
Թե դառնաս քո անցած ճամփեքով... (ՎՏԵԺ, հ. 1-ին, էջ 409)։

«Պառկած տեղից վրա նստեց ու ժպտալով հետը խոսեց» (ՀԹԸԵ, էջ 248)։

«Հետո կանգնած տեղից՝ դռան առջևից նայում է սենյակի անկյունները...» (ՍՉՄԿՊ, էջ 364)։

Ընդգծված որոշյալները (ճամբեք, տեղ) քերականորեն պառկած, կանգնած, անցած դերբայներով արտահայտված գործողությունների անմիջական օբյեկտը չեն հանդիսանում, քանի որ նրանք չեզոք սեռի են և իրենց գործողության համար անմիջական օբյեկտ չեն պահանջում (հնարավոր չէ ասել կանգնված, պառկված տեղ, անցված ճամփա)։ Բայց իրականում տեղ, ճամփեք որոշյալները կարծես թե ներգործվում են կանգնելու, պառկելու, անցնելու

(նստելու և այլ) գործողություններից և թերևս այդ է պատճառը, որ հնարավոր է դարձնում նրանց հարակատար դերբայ որոշիչ ստանալը։

Հարակատար դերբայը կամ նրանով կազմված դերբայական դարձվածը որոշչի դեր կատարելիս սովորաբար դրվում է իր որոշյալից առաջ, բայց կարող է և ետադաս լինել։ Ետադաս կարող է լինել և ածական որոշիչը (ինչպես և ամեն մի որոշիչ), բայց բանն այն է, որ հարակատար դերբայ որոշիչը ետադաս լինելու դեպքում ձեռք է բերում իմաստային նոր երանգ. ետադաս լինելիս նա կարող է ըմբռնվել նաև որպես ձևի պարագա։ Այսպիսի ձևի պարագան ցույց է տալիս այն վիճակը, որի մեջ գտնվում է ենթական գործողության կատարման ժամանակ։ «Տանտիկինը, մինչև ականջակոթերը կարմրած, աշխատում էր մի կերպ եղածն ուղղի» (ՀԹԸԵ, էջ 118)։ «Սայլերին առաջնորդում էր մի ձիավոր, գտակը ծուռը դրած, մտրակը ծնկան վրա հենած, հանդարտ երգելով» (Շելժ, հ. 2-րդ, էջ 529)։

Ընդգծված դերբայական դարձվածները կարելի է ըմբռնել և՛ որպես որոշիչ (իսկ առաջադաս լինելու դեպքում անպայման որոշիչ), և՛ որպես ձևի պարագա։

Առաջադաս հարակատար դերբայ (կամ նրանով կազմված դերբայական դարձված) որոշիչը նույնպես կարող է ըմբռնվել որպես ենթակայի վիճակը ցույց տվող ձևի պարագա, երբ նրանից բաժանվում է ստորակետով կամ բութով։ «Այս տանջալից մտորումներով փոթորկված, կոլխոզի նախագահը վերադառնում էր հանդից...» (ՆՁՀ, էջ 115)։ «Երեխեն դոշիցը կապած՝ Լուսիկը գնում է լալով» (ՀԹԸԵ, էջ 12)։

Պրոֆ. Աբեղյանի կարծիքով ենթակայի կամ խնդրի վիճակ ցույց տվող այդ թվացող ձևի պարագան իրականում ստորոգելիական վերադիր է[2]։

2. Հարակատար դերբայով կազմված դարձվածը որպես ձևի պարագա

Հարակատար դերբայը կամ նրանով կազմված դարձվածը նախադասության մեջ հաճախ հանդես է գալիս որպես ձևի պարագա։ Հարակատար դերբայը ձևի պարագայի պաշտոն կատարելիս ցույց է տալիս ստորոգյալի գործողության կատարման ձևը արդեն կատարված, բայց մնայուն հետևանք թողած գործողությամբ։ Անկախ այն բանից, թե ինչ ժամանակով է արտահայտված ստորոգյալի գործողությունը, և հարակատար դերբայով արտահայտված գործողությունը նրան նախորդում է, թե ոչ—ձևի պարագայի պաշտոն կատարելիս հարակատարով դրսևորվող գործողության հարատևող հետևանքը ուղեկցում է, ընթացակից է լինում գլխավոր գործողությանը։ «Մի քանի վայրկյան իշխանը աչքերը լայն բաց արած նայում էր Ռուբենի երեսին» (Շելժ, հ. 2-րդ, էջ 583)։ «Մայրը անկողնու մեջ նստած հագավ շրջազգեստը...» (ԱՍԹ, էջ 6)։ «Աննան ամոթխած ժպտաց» (ՍՁՍՔ, էջ 7)։ «Ու ձեռքիցս բռնած ներս տարավ հիվանդ աշակերտիս սենյակը» (ՆԴԵԺ, հ. 2-րդ, էջ 583)։

Հարակատար դերբայն ընդհանրապես վիճակ ցույց տալու կարողություն ունի, և, ինչ պաշտոնով էլ հանդես գալու լինի, այդ իմաստային երանգը նրա մեջ պահպանվում է, իսկ որոշ պայմանների առկայությամբ կարող է ավելի

2 Տե՛ս պրոֆ. Մ. Աբեղյան, Աշխարհարար շարահյուսություն, 1912, էջ 56։

ցայտուն կերպով դրսևորվել։ Ձևի պարագա հարակատար դերբայի արտահայտած վիճակի իմաստն ավելի ցայտուն է դառնում և ընդգծվում, երբ նա, մանավանդ ստորոգյալից առաջադաս լինելու դեպքում, բաժանվում է նրանից ստորակետով կամ ավելի հաճախակի՝ բութով (այսինքն արտասանական դադարով), ինչպես՝ «Դեռևս ապուշ կտրած՝ նայում էի նրան» (ՆԴԵԺ, հ. 2-րդ, էջ 588)։ «Մեկը խոտի ճսկայական շալակի տակ կռացած՝ շարժվում էր դեպի Լևոնը» (ՆՁՀ, էջ 126)։ «Մաղաքյանը տեղից վեր թռավ ու բռունցքը բարձրացրած՝ վազեց դեպի Մեջլումյանը» (ԱԸԵ, էջ 133)։

Ընդգծված դերբայական դարձվածներով ավելի շուտ արտահայտվում է այն վիճակը, որի մեջ գտնվում է ենթական գործողությունը կատարելիս, քան թե այդ գործողության կատարման կոնկրետ ձևը։ Ենթակայի վիճակ ցույց տվող դերբայական դարձվածը կարող է ըմբռնվել որպես ստորոգյալի լրացում՝ ձևի պարագա, քանի որ նա հենց ստորոգյալի գործողության կատարողի՝ ենթակայի վիճակն է ցույց տալիս (այն վիճակը, որի մեջ գտնվելով ենթական կատարում է գործողությունը, ըմբռնվում է որպես այդ գործողության կատարման ձև)։ Իսկ երբ դերբայական դարձվածով արտահայտվում է ոչ թե նախադասության ենթակայի, այլ խնդրի վիճակը, ապա այդպիսի դարձվածը ձևի պարագա համարվել չի կարող, չի կարող համարվել նաև ստորոգելիական վերադիր։ Մեզ թվում է, որ այդպիսի դարձվածները պիտի համարել առանձին կատեգորիա։ «Ու միշտ տեսնում էի աղջկանս արևը գրկած, իր մազերը նրա վրա փռած...» (ԱԸԵ, էջ 4)։ «....երբ դուրս է եկել եզներին նայելու, գտել է ինձ պապիս լուսամուտի տակ ընկած, և իմ կողքին նստած է եղել մեր Թոբլանը...» (ՍԶՄԿՊ, էջ 166)։ «Եվ երբ հեռվից ետ նայեցի, տեսա թշվառ ծերունուն միշտ նույն դիրքի մեջ, նստած իր ավերված արտի կողքին, գլուխը ձեռքերին և ալեզարդ մազերը տեղացող անձրևի տակ...» (ՎՓԸԵ, էջ 350)։ «Ջեմ թողնի նրան հավիտյան լքված, նա ինձ ապավեն կանգնեց նեղ օրում» (ՀԹԵԺ, հ. 1-ին, էջ 143)։

Այս նախադասությունների մեջ ընդգծված դարձվածները թեև պատասխանում են «ինչպե՞ս» հարցին, բայց ստորոգյալի ձևի պարագա համարվել չեն կարող, քանի որ այդ «ինչպե՞սը» վերաբերում է ոչ թե ստորոգյալի գործողության կատարման ձևին, կերպին կամ գոնե ենթակայի վիճակին՝ այդ գործողության կատարման ժամանակ, այլ՝ խնդրի վիճակին. ոչ թե ինչպե՞ս տեսավ կամ գտավ, այլ տեսավ, գտավ (որևէ մեկին կամ մի բան) ինչպե՞ս, ի՞նչ վիճակում։ Վիճակ ցույց տվող այսպիսի լրացում կարող է ընդունել միայն ուղիղ խնդիրը։

Հարակատարով կազմված դարձվածը ձևի պարագայի պաշտոն կատարելիս ընդհանրապես կողմնակի ենթակա չի ունենում. դերբայի գործողության կատարողը այսպիսի դեպքերում լինում է նույն ինքը՝ նախադասության ենթական։

Խնդրի վիճակ ցույց տվող հարակատար դերբայով կազմված դարձվածը նույնպես կողմնակի ենթակա ունենալ չի կարող, բայց դերբայով արտահայտված գործողության կատարողն այստեղ ոչ թե նախադասության ենթական է, այլ հենց ուղիղ խնդիրը, որը բնականաբար չի կարող մտնել իր լրացումը հանդիսացող դերբայական դարձվածի մեջ։ Ուղիղ խնդրի վիճակ ցույց տվող դերբայական դարձվածը սովորաբար դրվում է այդ խնդրից հետո։

3. Հարակատարով կազմված դարձվածը որպես ժամանակի պարագա

Հարակատար դերբայով կազմված դարձվածը (երբեմն էլ միայն հարակատար դերբայը) կարող է նախադասության մեջ կատարել ժամանակի պարագայի պաշտոն՝ ցույց տալով ստորոգյալով արտահայտվող գործողության կատարման ժամանակը՝ նրան նախորդող, ընթացակից և ետնորդող գործողությունների միջոցով։

ա) Նախորդող գործողությամբ՝ հարակատար դերբայով կազմված դարձվածը ցույց է տալիս, որ ստորոգյալի գործողությունը կատարվել է, կատարվում է, կատարվելու է դերբայով արտահայտված գործողության ավարտումից հետո։ «Քառորդ ժամ անցած՝ նա դուրս եկավ սաստիկ մտատանջության մեջ» *(Շեկ, հ. 2-րդ, էջ 224)։* «Եվ այն ժամանակ ահա, երբ խստաբարո խաղ եպիսկոպոսը և նրա վարդապետները երեկոյան պաշտամունքը կատարած դուրս էին գալիս դահլիճից, նրանց զարմացրեց հրապարակի աղմուկը...» *(ՍԶՊԹ, էջ 260)։*

Այսպիսի դեպքերում հարակատար դերբայը կարող է փոխարինվել անորոշ դերբայի բացառական հոլովով ու հետո կապով՝ երեկոյան պաշտամունքը կատարելուց հետո, քառորդ ժամ անցնելուց հետո *և այլն։ Սրանցից յուրաքանչյուրը ունի, իհարկե, միայն իրեն հատուկ իմաստային երանգ, որ մյուսը չի կարող արտահայտել։*

բ) Ընթացակից գործողությամբ՝ հարակատար դերբայով կազմված դարձվածը ցույց է տալիս, որ գլխավոր գործողությունը կատարվել է, կատարվում է կամ կատարվելու է դերբայով արտահայտվող գործողության հարատևող հետևանքին (և ոչ թե դերբայի բուն գործողությանն) ընթացակից։

«Երբ ոսոխի հանդիպած պիտի կռվես ակամա» *(ԵՁԸԵ, էջ 152)։* «Հայր ունեի ծովում կորավ, ոտի ելած մութ գիշեր» *(ԱԾԸԲ, էջ 85)։* «...խոսում են շատ սակավ, թվում է միայն ծայրահեղ անհրաժեշտությունից ստիպված» *(ՍԶՄԿՊ, էջ 286)։*

Պետք է նշել, որ այսպիսի դերբայական դարձվածներն ունեն պատճառայնության երանգ, կարող են ըմբռնվել նաև որպես պատճառի պարագա։

Գլխավոր գործողության կատարման ժամանակը նրան ընթացակից գործողությամբ ցույց տվող ժամանակի պարագան կարող է արտահայտվել նաև հարակատար դերբայի հաստատական և ժխտական ձևերի համադրումով, ինչպես՝ «Իրինձը լվացած, չլվացած, հեռվից երևում է մի ձիավոր» *(Շեկ, հ. 3-րդ, էջ 444)։ Այդպիսի ժամանակի պարագան ցույց է տալիս, որ գլխավոր գործողությունը կատարվում է հարակատարով դրսևորվող գործողության կատարման ժամանակ (և ոչ թե նրա հարատևող հետևանքի տևողության ընթացքում)։*

գ) Ետնորդող գործողությամբ՝ հարակատար դերբայով կազմված ժամանակի պարագա դարձվածը ցույց է տալիս, որ գլխավոր գործողությունը կատարվել է, կատարվում է կամ կատարվելու է նախքան դերբայով արտահայտած գործողության կատարումը։ Այսպիսի դեպքերում հարակատար դերբայը դրսևորվում է ժխտական ձևով։ «Լույսը չծագած, ես այստեղ եմ,—ասաց Աննան» *(ՆԴՁ, էջ 68)։* «Դեռ գյուղ չմտած երևաց բրուտ Մանասարի աղջիկը, որը մի կապոց ձեռքին իջնում էր ձորը» *(ՍԽՀ, էջ 200)։*

4. Հարակատար դերբայով կազմված դարձվածը որպես պատճառի պարագա

Հարակատարով կազմված դարձվածը նախադասության մեջ հանդես է գալիս նաև պատճառի պարագայի պաշտոնով, օրինակ՝ «Սովետական իշխանության մոտալուտ վախճանից հույսը կտրած, նա այժմ գերադասում էր կոմունիստների հետ խնամիական կապեր հաստատել» (ՆՁՀ, էջ 179)։ «Հաղթահարված խորին ինից՝ պապանձվեցին ամեն տեղ» (ՀԹԺ, հ. 1-ին, էջ 121)։

Երբեմն պատճառի պարագա հարակատար դերբայը վիճակային ուժեղ երանգով է դրսևորվում։ Այսպիսի դեպքերում գլխավոր գործողության կատարման բուն պատճառը կարծես թե այլ է, կարծես թե գլխավոր գործողությունը կկատարվեր առանց հարակատարով արտահայտվող պատճառի էլ, օրինակ՝ «...քանի որ ամենից հեռացած, չուներ ոչ ոքի հետ սրտակից հարաբերություն, բառիս ընդարձակ նշանակությամբ» (ՇԵԼԺ, հ. 1-ին, էջ 446)։ «Առավոտվա վեհությամբ թովված՝ զգաց հանկարծ իրեն այնքան թեթև...» (ԵՁԸԵ, էջ 249)։ «Եվ լուսաբացին, երբ հոգնած լինեք, երբ քնած լինեք թշնամուց խաբված...» (ՎՏԵԺ, էջ 207)։

Ընդգծված դերբայական դարձվածներում պատճառն ու վիճակը հանդես են գալիս միահյուսված և հարակատար դերբայով արտահայտվող վիճակը (ենթակայի վիճակը) կարող է ըմբռնվել որպես գլխավոր գործողության կատարման պատճառ, թեև այդ դարձվածներին ավելի մեծ վստահությամբ կարելի է ավելացնել վիճակում բառը (առավոտվա վեհությամբ թովված վիճակում), քան թե լինելու պատճառով (առավոտվա վեհությամբ թովված լինելու պատճառով)։

5. Հարակատարով կազմված դարձվածը որպես հակառակ հիմունքի պարագա

Հարակատար դերբայով կազմված դարձվածը, առանց որևէ կապի կամ կապական բառի խնդիր լինելու, ազատ կերպով կարող է հանդես գալ որպես հակառակ հիմունքի պարագա (մինչդեռ որպես հիմունքի պարագա մեծ մասամբ հանդես է գալիս որևէ կապի կամ կապական բառի հետ՝ ըստ, համաձայն և այլն)։

Հարակատար դերբայի էությանը հատուկ գործողության հարատևող հետևանքի առկայության շնորհիվ այստեղ ևս, դերբայական դարձվածի հիմնական իմաստին զուգընթաց, արտահայտվում է նաև վիճակի հասկացություն։

Հակառակ հիմունքի պարագայի պաշտոն կատարող դերբայական դարձվածը նախադասության մյուս անդամներից սովորաբար անջատվում է բութով կամ ստորակետով։

«Ուրիշին գրկած՝ ես քեզ եմ զգում...» (ԱԻԵԺ, հ. 2-րդ, էջ 112)։ «Հավետ ինեզ կապված՝ քեզ օտար եմ ես» (ՎՏԵԺ, հ. 1-ին, էջ 13)։ «Շատ անգամ, հոգով հիացած երգչի երգով, նա ամաչում է յուր հիացումը արտահայտել, կարող են անճաշակ համարել» (ՇԵԼԺ, հ. 4-րդ, էջ 428)։

6. Հարակատարով կազմված դարձվածը որպես ենթակա, խնդիր և այլն (դարձվածի գոյականական գործածությունը)

Հարակատար դերբայը ենթակայի, խնդիրների, հատկացուցչի, բացահայտչի պաշտոններ կատարելիս վերցվում է գոյականաբար, առարկայաբար և հանդես է գալիս որոշակի հոլովներով։ Հարակատար դերբայով արտահայտվող գործողության հարատևող հետևանքը, որ նրան հնարավորություն էր տալիս հանդես գալ որպես առարկայի հատկանիշ ցույց տվող (որոշիչ), այստեղ էլ հնարավորություն է տալիս՝ հոլովվելով իր մեջ ներառնել նաև իր որոշյալի առարկայական իմաստը և հանդես գալ հատկանշի ու առարկայի միացյալ իմաստով։

Ենթակայի պաշտոն կատարող հարակատար դերբայը կարող է արտահայտել թե՛ իր և թե՛ անձ, կարող է կազմվել թե՛ ներգործական, թե՛ կրավորական և թե՛ չեզոք բայերից, ինչպես՝ «Պատշգամբում տեսածդ քեզ դուր չեկավ երևի» (ՍԶՄԿՊ, էջ 371)։ «Ես ինքս չեմ հասկանում,—շարունակեց նա, թե ի՛նչ երեսով աստծուց պատժվածը ուզում էր մարդկանց շարքն ընկնել» (Շեկ, հ. 2-րդ, էջ 574)։ «Կողմի նստածները Քնարիկին օգնելու նպատակով սկսեցին քաշքշել Արաքսի ուսերը, թևերը» (ԱՍԱ, էջ 355)։ Հարակատար դերբայը ենթակայի պաշտոն կատարելիս միշտ հանդես է գալիս որոշիչ հոդով։

Հանդես գալով որպես ուղիղ խնդիր՝ հարակատար դերբայն ունենում է իրի կամ անձի առում, բայց, դարձյալ, միշտ որոշյալ հոդով։ «Լեհացին հերքում էր նրա ասածները» (Շեկ, հ. 2-րդ, էջ 450)։ «Բայց նկատելով դուսն մեջ կանգնածին, լռեց ու արագ հեռացավ սենյակից» (ՎԽՄՄՀ, էջ 58)։

Հարակատար դերբայը անորոշ առումով ևս կարող է խնդրի պաշտոն կատարել, բայց դա անհարթ է հնչում, այսպես, օրինակ՝ «...նա հոժարությամբ տալիս էր ամեն ուզած, որ չէին արգելում...» (ՊՊՀԽ, էջ 76)։

Հարակատարով կազմված դարձվածը (կամ միայն հարակատար դերբայը) նախադասության մեջ կատարում է նաև անուղղակի խնդիրների պաշտոններ, օրինակ՝ «Փորձով գիտեմ, որ եթե հակառակ ես գնում սրտիդ ուզածին, ինչքան զղջում ու ափսոսում ես հետո...» (ՍԶՍՔ, էջ 112)։ «Սև գրողի էն տարածին ո՞վ է տվել սրած կացին» (ՀԹԵԺ, հ. 1, էջ 241)։ «Նա անվերջ գրում էր, ջնջում և գրածով երբեք չէր գոհանում» (ՍԶՍՔ, էջ 63)։ «Բայց աչքերը հոգնել էին, իսկ միտքը ոչինչ չէր ըմբռնում կարդացածից» (ՇՔ, էջ 166)։ «Ամեն անգամ fn տվածից երբ մի բան ես դու տանում...» (ՀԹԸԵ, էջ 79)։

Հարակատար դերբայը կամ նրանով կազմված դարձվածը բացի որոշչից հանդես է գալիս նաև ենթակայի մյուս լրացումների՝ հատկացուցչի և բացահայտչի պաշտոններով, թեև, իհարկե, շատ ավելի հազվադեպ։ Հարակատար դերբայ հատկացուցիչը գոյական, դերանուն հատկացուցիչներից տարբերվում է նրանով, որ ցույց է տալիս ոչ միայն այն առարկան, որին որևէ բան պատկանում է, այլև այդ առարկայի ինչպիսի դրության մեջ լինելը, ինչպես՝ «Ձիերը խրտնեցին, աջակողմինը փոքր էր մնում. որ ոտքը դնի գետնի վրա տարածվածի կրծքին» (Շեկ, հ. 2-րդ, էջ 132)։ «Հարստահարվածի ու ընկճրվածի անզոր կատաղության հետ...» (ՇՔ, էջ 96)։

Հանդես գալով որպես բացահայտիչ, հարակատար դերբայը (կամ նրանով կազմված դարձվածը) ցույց է տալիս նախադասության որևէ անդամի ոչ միայն ով կամ ինչ լինելը, այլև ինչպիսի դրության մեջ լինելը։ «Մինչդեռ նա, ոսկե-

ճյուս խանձարուրի մեջ սնվածը և շուքի ու շռայլության մեջ օրորվածը ոչնչով, ոչնչով պարտական չէր մի աննշան, մի աղքատիկ աղջկա ազատելու կրակի ճիրաններից» (ՇՔ, էջ 376)։ «Տնեցիք, այսինքն փախստական շղառածները, մի զառամյալ էր, սրա կույր թոռը, տասներեք տարեկան և մի հիվանդ, հասակավոր կին» (ԴԴԸՊ, էջ 225)։

Գոյականաբար հանդես եկող հարակատար դերբայը կարող է ունենալ կողմնակի ենթակա, երբ դերբայը կազմված է ներգործական բայերից, և ներգործող խնդիր, երբ դերբայը կազմված է կրավորական բայերից, օրինակ՝ «Բա մարդկություն է էդ Զուրաբենց գժի արածը» (ՆԶՀ, էջ 244)։ «Նա յուր կյանքը վտանգի ենթարկելով առաջ է ընկնում և ավազակներից հալածվածներին պաշտպանում» (Շեկ, հ. 2-րդ, էջ 437)։ «...և աշխատում կարծես մի բան հասկանալ նրա ասածներից» (ՍԶՍՔ, էջ 11)։ Իսկ չեզոք սեռի հարակատար դերբայը գոյականաբար հանդես գալիս ընդհանրապես կողմնակի ենթակա ունենալ չի կարող, քանի որ դերբայի գործողության կատարողի գաղափարը արտահայտվում է հենց իր՝ դերբայի հոլովված ձևի մեջ. գործողությունն ու նրա կատարողը այստեղ հանդես են գալիս միասնաբար։ «Ում ձեռքը որ ընկավ, վա՛յ էդ թվանքի բերնի դեմ կանգնածին» (ԴԴԸՊ, էջ 250)։ «Բայց դրանով կգտնվի՞ կորածը» (ՎԽՄՄՀ, էջ 163)։ Այստեղ կանգնածին, կորածը դերբայներով արտահայտվող գործողությունների կատարողները հենց այդ նույն կանգնողն ու կորչողն են։

Հարակատարով կազմված դարձվածը երբեմն կարող է հանդես գալ նաև կոչականի պաշտոնով։ Կոչականի դերում հարակատար դերբայը, թեև առանց հոլովվելու, դարձյալ հանդես է գալիս գոյականաբար։ Հարակատարով դրսևորված գործողությունը հանդես է գալիս այդ գործողությունը որպես հատկանիշ կրող առարկայի, նրա անվան փոխարեն, ինչպես՝ «Ո՞ւր կորար, Անուշ, ա՛յ մազդ կտրած...» (ՀԹԸԵ, էջ 187)։

«Տո՛ ձենով Օհան, տո՛ մանի տարած,
Էս խենթը բերիր, արիր գառնարած» (ՀԹԸԵ, էջ 57)։

7. Հարակատարով կազմված դարձվածի ստորոգելիական գործածությունը

Հարակատար դերբայը կարող է նաև ինքը մենակ, առանց օժանդակ բայի, նախադասություն կազմել, ստորոգյալի դեր կատարել (առանց ստորոգում ցույց տալու). այսպիսի նախադասություններն արտահայտում են սոսկ վիճակ և օգտագործվում են մեծ մասամբ հուզական դրություն ցույց տալու համար, ինչպես՝ «Մութն է։ Ու ես գլխիկոր էն ավերակ քաղաքի վրա կանգնած ինչպես մի բեկոր...» (ՀԹԵԺ, հ. 1-ին, էջ 15)։ «—Դու անկողնում պառկա՜ծ» (ՆԴՋ, էջ 61)։

8. Հարակատարով կազմված դարձվածը որպես կապի խնդիր

Կապերի և կապական բառերի հետ հարակատար դերբայը (կամ նրանով կազմված դարձվածը) հանդես է գալիս զանազան պարագաների (ձևի, տեղի, չափի, հիմունքի, հակառակ հիմունքի) և անուղղակի խնդիրների (վերաբերության, բաղդատության) պաշտոններով, այսպես, օրինակ. «Խորը ֆնից սրափված նման արմունկները քաշեց պատշգամբի ճաղերից...» (Շեկ, հ. 1-ին, էջ 251)։ «Հասմիկը խայթվածի պես վեր ցատկեց» (ՆԶՀ, էջ 415)։ «Ասում է, որ պարոն Վարդանի սրբագրածի մեջ սխալ է գտել» (ՍԶՄԿՊ, էջ 379)։ «—Ասում եմ կգա մի օր, երբ մարդը կհաղթի մահին, ասենք գեթ այնքան, որ ապրի

սիրտն ուզածի չափ» (ԱՍՔ, էջ 34)։ «...և թաղված է այս ծառերի տակ իր սրտի ուզածի համաձայն» (ԱԻԵ, էջ 217)։ «Սառան, հակառակ սպասածիս, ինձ ընդունեց բավական սառը կերպով» (ՆԴԵԺ, հ. 2-րդ, էջ 455)։ «...եկել էր ու հայտնել նրա նախագծի հետ պատահածի մասին...» (ՎԽՄՄՀ, էջ 62)։ «Միքայելը լուռ լսում էր ու մտածում իր լսածի շուրջը» (ՎԽՄՄՀ, էջ 325)։ «Բժիշկ Մելիք-Բարսեղյանը չգիտեր զարմանալ, ծիծաղել, թե վշտանալ յուր տեսածի վրա» (ՇԵԼԺ, հ. 2-րդ էջ 233)։ «Նայում է ու համեմատում իր ունեցածի հետ, թե իր ունեցածը որտեղ, էս որտեղ» (ՀԹԸԵ, էջ 144)։

Կապի հետ հանդես եկող հարակատար դերբայ ձևի պարագան ստորոգյալի գործողության կատարման ձևը ցույց է տալիս ոչ թե նախադասության ենթակայի (ինչպես սովորաբար՝ քայլում էր ձեռքերն առաջ պարզած), այլ՝ ընդհանրապես որևէ մեկի կողմից կատարված, ավարտված, բայց մնայուն հետևանք թողած գործողությամբ (քայլում էր հարբածի նման)։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԸԵ—Արազի, Ընտիր երկեր, 1948 թ.
ԱԻԵ—Ավետիք Իսահակյան, Երկեր, 1955 թ.
ԱԻԵԺ—Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, 1950 թ.
ԱԾԸԲ—Ալեքսանդր Ծատուրյան, Ընտիր բանաստեղծություններ, 1937 թ.
ԱՍԱ—Անժելա Ստեփանյան, Ամառնամուտ, 1959 թ.
ԱՍՔ—Անժելա Ստեփանյան, Քույրեր, 1947 թ.
ԱՍԾ—Անահիտ Սահինյան, Ծարավ, 1955 թ.
ԴԴԸՊ—Դերենիկ Դեմիրճյան, Ընտիր պատմվածքներ, 1950 թ.
ԴԴՎ—Դերենիկ Դեմիրճյան, Վարդանանք, 1954 թ.
ԵՉԸԵ—Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, 1955 թ.
ՀԹԵԺ—Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, 1950 թ.
ՀԹԸԵ—Հովհաննես Թումանյան, Ընտիր Երկեր, 1953 թ. և 1941 թ.
ՂԱԵ—Ղազարոս Աղայան, Երկեր, 1939 թ.
ՄԱ—Մուրացան, Առաքյալը, 1954 թ.
ՄԳՄ—Մուրացան, Գևորգ Մարզպետունի, 1939 թ
ՆԴԵԺ—Նար-Դոս, Երկերի ժողովածու, 1955 թ.
ՆԴԵԼԺ—Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, 1950 թ.
ՆԴՉ—Նար-Դոս, Չազունյան, 1934 թ.
ՆՉԱԳ—Նաիրի Զարյան, Արա Գեղեցիկ, 1946 թ.
ՆՉՀ—Նաիրի Զարյան, Հացավան, 1955 թ.
ՇԵԼԺ—Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, 1950 թ.
ՇՔ—Շիրվանզադե, Քառս, 1944 թ.
ՊՊՀԽ—Պերճ Պռոշյան, Հացի խնդիր, 1939 թ.
ՍՉԸԵ—Ստեփան Զորյան, Ընտիր երկեր, 1940 թ.
ՍՉՄԿՊ—Ստեփան Զորյան, Մի կյանքի պատմություն, 1955 թ.
ՍՉՊԹ—Ստեփան Զորյան, Պապ թագավոր, 1944 թ.
ՍՉՍՔ—Ստեփան Զորյան, Սպիտակ քաղաքը, 1932 թ.
ՍԽՀ—Սերո Խանզադյան, Հողը, 1954 թ.
ՎԽՄՄՀ—Վիգեն Խեչումյան, Մեզ մոտ հարավում, 1955 թ.
ՎՏԵԺ—Վահան Տերյան, Երկերի ժողովածու, 1950 թ.
ՎՓԸԵ—Վրթանես Փափազյան, Ընտիր երկեր, 1951 թ.